ՂՐԻՄԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ղրիմահայ գաղութի ճարտարապետական ժառանգությունը վաղուց ի վեր գրավում է ուսումնասիրողների ուշադրությունը, սակայն հրապարակի վրա դեռ շատ քիչ են առանձին հուշարձաններին նվիրված աշխատություններ և չկա մի ամփոփ աշխատություն, որը ներկայացներ Ղրիմում պահպանված հայ ճարտարապետական հուշարձանների վերլուծությունն ու նկարագրությունը։ Ներկա հոդվածը ընթերցողին ներկայացնում է ևս մեկ հուշարձան՝ Ղրիմի արևելյան մասում, Բոգատոյե գյուղի տարածքում գտնվող Ամենափրկիչ վանքը։ Այն երբեմն անվանվել է նաև Ս. Եղիայի անունով, սակայն ավելի հայտնի է Ամենափրկիչ անունը[1]։

Բոգատոյե գյուղը, որ հնում կոչվում էր Բախչի-Ալի, գտնվում է Բելոգորսկ (Կարասու-Բազար) քաղաքից ոչ հեռու։ Սիմֆերոպոլ—Թեոդոսիա մայրուղին անցնում է նշված Բոգատոյե գյուղով և արդեն հեռից երևում է բարձր բարդիների շարքը, որը նշանահարում է դեպի հուշարձանը տանող ճանապարհը։ Նման բարդիների շարքով կարելի է իմանալ որտեղ են եղել ժամանակին հիմնադրված հայկական օջախները։

Տեղանքն ընտրելիս մեր նախնիները արտակարգ խորաթափանցություն են ցուցաբերել։ Հուշարձանը Սիմֆերոպոլ—Թեոդոսիա մայրուղուց չի երևում։ Վերջին հանգամանքը միջնադարի պայմաններում բնավ երկրորդական չի եղել։ Այն սարալանջը, որի վրա կառուցված է հուշարձանը, մի կողմից բացվում է դեպի գեղատեսիլ հովիտը, իսկ մյուս կողմից եզերված է անտառապատ, բարձր լեռներով։ Հայերին միշտ գրավել է տեղանքի քիչ թե շատ Հայաստան հիշեցնող շրջապատը։ Ամենափրկիչ վանքի շրջապատը շատ է հիշեցնում մեր Հայաստանի բնապատկերը։

Վանքի հիմնադրման ժամանակը ստույգ հայտնի չէ, սակայն նրա ճարտարապետական ձևերի բնույթը ցույց է տալիս, որ կարող էր կառուցված լինել XIV դարի II կեսում կամ XV դարի սկզբում։ Պատերի մանրամասն զննումը ցույց է տալիս, որ կառույցը կառուցված է եղել մի ժամանակ և խոսք չի կարող լինել շինարարական տարբեր ժամանակահատվածների մասին։

Արտաքինից հուշարձանը թողնում է արևելքից արևմուտք ձգված ոչ բարձր կառուցվածքի տպավորություն։ Արևմտյան ճակատի վրա պահպանված ճակատոնից կարելի է եզրակացնել նրա տանիքի եզրագծի մասին։ Հարավային, հյուսիսային և արևմտյան ճակատներին, քիվի տակ նշմարվում են պատի միջից դուրս դրված պահունակներ, որոնց նշանակությունը, մեր կարծիքով, եղել է քիվին առավել կայունություն հաղորդելը։ Սակայն քիվի ընդհանուր բարձրությունը ստացվում է շատ մեծ (նկ. 1)։ Կառույցը մի դահլիճանի, ձգված շենք է, որը ունի երեք մուտք և համեմատաբար լայն բացվածքներով լուսամուտներ հարավային, հյուսիսային և արևմտյան պատերին։ Լուսամուտների բարավորները սլաքաձև են և եզերված են սրբատաշ քարերով։ Կոնստրուկտիվ նշանակություն ունեցող հատվածները, առավել պատասխանատու հանգույցները կառուցված են կանոնավոր մշակված և բավական խոշոր քարերից։ Շքամուտքերից համեմատաբար լավ է պահպանվել հյուսիսայինը, որի կողային պատերի մեջ, որոնք բավականին դուրս են դրված եկեղեցու երկայնական պատից, պահպանվել են խորշերի հետքեր։ Նման կառուցում ունի նաև հարավային շքամուտքը, որի արևմտյան կողմի եզրային պատը արդեն փլվել է։

Արևմտյան քանդված շքամուտքի պեղումների շնորհիվ պարզվել է, որ այս դռան բացվածքը եղել է ավելի լայն, քան հարավայինը և հյուսիսայինը։ Հավանական է, որ սա ավելի ճոխ մշակում է ունեցել։ Հարավային և հյուսիսային շքամուտքերի կամարները նույնպես սլաքաձև են և հավանաբար ունեցել են ճակատոն, որից ոչինչ չի պահպանվել։ Կամարները և բոլոր շքամուտքերը եզերված են նրբին բանդակաղարդերով։

[1] Э. М. Корхмазян. Армянская миниатюра Крыма. Ереван, 1978, с. 107.

Արևելյան ճակատին պահպանվել է խիստ ավերված մի մուտք, ավելի շուտ քանդված մի բացվածք, որից այժմ հնարավոր է ներս մտնել ավաղ խորանի ետևի նեղ միջանցքը։ Այդ միջանցքի առաստաղը ծածկված է երկթեք տեղադրված քարե ռալերով, որոնք յուրովի թաղ են հիշեցնում։ Շատ հավանական է, որ այդ միջանցքը ժամանակին ծառայել է տանիք բարձրանալու համար։ Ա. Լ. Յակոբսոնը՝ այդ անցքը համարում է ավաղ խորանի երկու կողմերում տեղադրված ավանդատների մուտք։ Մանրամասն պեղումները կարող են լույս սփռել այդ հարցի միշտ լուծման վրա։ Հարավային ճակատի արևելյան մասում պահպանվել են պատի փլատակներ, որ, ըստ երևույթին, կից կառուցված շենքի մնացորդ է։ Հարավային շքամուտքը վերջին տարիների ընթացքում համարյա լրիվ քանդվել է, մնացել է միայն արևելյան կողմի պատը իր մեջ տեղադրված խորի հետ։ Հյուսիսային շքամուտքը համեմատաբար լավ է պահպանվել, իսկ կառուցողական տեսակետից այն հար և նման է հարավայինին։

Ճաճարը լուսավորվել է հարավային և հյուսիսային ճակատներին տեղադրված բավական լայն լուսամուտներով, որոնց վրա պահպանվել են տաշվածքների հետքեր։ Հարավային պատին



Նկ. 1

պահպանվել է չորրորդ պատուհանի հետքը, որը Երևի շարվել է դեռ տաճարի կառուցման ժամանակ։ Հարավային և հյուսիսային պատերին պահպանվել են կոնտրֆորսների մնացորդներ և տեղ-տեղ՝ փայտե հակասեյսմիկ դոտիների հետքեր։ Նեփր, որով պատված էր ամբողջ կառույցը թե՛ ներսից և թե՛ դրսից, պարունակում է բուսական մագաթիլային խառնուրդներ։ Պահպանվել են շրհորդանները՝ հարավային և հյուսիսային ճակատների վրա։ Երեքական, արևելյան ճակատին՝ երկու հատ։

Հարավային ճակատում պահպանված պահունակների վրա տեղադրված են եղել քարե սալեր, որոնք հետագայում միտումնավոր ջարդվել են։ Պատերի վերին մասերում պարզ երևվում են պահունակների ջարդված մնացորդները։ Հարավային ճակատին մնացել է միայն մեկը, իսկ արևմտյան ճակատին պահպանվել են բոլոր պահունակները, որոնց տրամատով

---

[2] А. Л. Якобсон, Ю. А. Тамаян. Армянская архитектура в Крыму (в печать).

կարող ենք որոշել նաև մյուսների չափը և տրամատը։

Եկեղեցու դահլիճը, չնայած միասնական ներքին տարածության, այնուամենայնիվ բաժանված է երեք մասի։ Արևելյան մասում գտնվում է ավագ խորանը իր երկու կողմերում տեղավորված ավանդատներով (նկ. 2)։

Այս հուշարձանը մեծ հետաքրքրություն է ներկայացնում իր բուն հայկական ճարտարապետական ձևերով, որոնք ենթարկվել են նաև տեղական պայմանների ազդեցությանը։ Ուշագրավ է հատուկ շեշտված կենտրոնական մասը, ուր ամբողջ ծածկը պահվում է խաչվող ներքյուրների վրա։ Ծածկի այս տիպը հեռու



Նկ. 2

է հայկական լինելուց և ավելի շուտ հիշեցնում է ռոմանական ճարտարապետության մեջ կիրառված կոնստրուկտիվ միջոցները։ Ներքյուրների հատման տեղում, կլոր սկավառակի մեջ պատկերված է Աստծու դառը լարարամի հետ (դրոշ երկար փայտով)։ Նույնատիպ սկավառակ տեսնում ենք ավագ խորանի կոնխայում։ Ի դեպ, նման սկավառակներ պահպանվել են Ղրիմի Սուրբ Խաչ վանքի եկեղեցում։ Այս անշուշտ արևմտաեվրոպական ճարտարապետության ազդեցությունն է։ Կարող ենք նաև նշել, որ Կիլիկիայի հուշարձանների վրա ևս կան նման պատկերներ, որոնք կարելի է համարել արևմուտքի մշակույթի ազդեցությունը։ Ավագ խորանի կենտրոնում տեղադրված է կիսակլոր բարավոր ունեցող դռնակ՝ խորանի ետևի սրահի հետ կապվելու համար։ Ավագ խորանի մույթերի երկու կողմերում դասավորված են ավանդատները, որոնք եկեղեցու դահլիճի հետ անմիջապես կապված չեն։

Ինչպես ասացինք, երկու գոտկող կամարներով դահլիճը բաժանված է երեք մասի։ Ավագ խորանին հպվող դահլիճի այդ մասը ծածկված է գլանաձև թաղով։ Նույնատիպ կոնստրուկցիա է կիրառված նաև դահլիճի արևմտյան հատվածում։ Այսպիսով, այս հուշարձանում գմբեթի փոխարեն, կենտրոնական մասում, արված է խաչաձև թաղ, և դրանով դահլիճի ներսի տարածությունը դիտվում է ոչ մասնատված, այլ լայնաթռիչք կամարների շնորհիվ ստանում է ավելի միասնական հորինվածք։

Ավագ խորանի մոտ, հյուսիսային պատի վրա պահպանվել է մկրտարանը՝ ձևավորված հետաքրքիր հյուսկեն քանդակներով։ Կլոր մեչալիոնների մեջ տեղավորված են, ըստ Յակոբսոնի՝ Քերովբեները՝ զույգ-զույգ, սակայն, ըստ մեզ, դա մկրտության տեսարան է։

Թաղակապ ծածկի գոտկող կամարները հենվում են հյուսիսային և հարավային պատերի մեջ ազուցված պրոֆիլավոր պահունակների վրա։

Հյուսիսային և հարավային պատերի երկայնքով, թաղի հիմքում պահունակներից վերև ձգվող պրոֆիլավոր գոտին հիմք է ծառայում թաղածածկի համար։

Ավագ խորանի երկու կողմերում դասավորված երկու խորշերում տեղադրված են խոշոր չափի քանդակազարդ քարեր։ Հյուսիսային խորշում պատկերված է եղել Քրիստոսի հարության տեսարանը (չի պահպանվել)։ Նրանից վերև

տվելի փոքր խորշի մեջ տեղադրված քանդակը չի հասկացվում ծեփով և ներկով ծածկված լինելու պատճառով։ Դեպի աջ և մի փոքր վերև պատկերված է սրբադնագործության տեսարանը, վրան տեղադրված է երեք գմբեթներով մի կառուցվածքի մանրակերտը (նկ. 3)։

Ավագ խորանի մեջ կամ հարավային կողմում տեղադրված են. ցածի խորշում խաչելության տեսարանը, ապա մի փոքր վեր Տիրամայրը մանկան հետ և դրանից վեր ու մի

Նկ. 3

փոքր ձախ՝ դարձյալ սրբադնագործության տեսարանը, ինչ-որ կառուցվածքի ծածկի տակ։ Բոլոր քանդակները շատ վատ են երևում, որի հետևանքով մանրամասնությունները չեն հասկացվում։

Հուշարձանի տեխնիկական վիճակը, ինչպես երևում է լուսանկարներից, բավական վթարային է։ 1968 թ. այցելության ժամանակ (Է. Կորխմազյան, Աս. Մնացականյան, Յու. Թամանյան) նրա վիճակը արդեն վատ էր։ Ներկայումս հուշարձանը ամբողջապես վեր է ածվում ավերակի։ Այժմ քանդվել են արևմտյան պատուհանը և նրա տակ գտնվող դռան կամարը, առաջացնելով մի ընդհանուր բացվածք։ Քանդվել են նաև հարավային շրամուտքի կամարը և արևմտյան պատի մի մասը։ Բացակայում է ծածկասալերի դդալի մասը, արևելյան և արևմտյան թաղի մեջ առաջացել են բավական ընդարձակ անցքեր։

1984 թ. աշնանը, տանիքի ծածկասալերի ընդհանուր ձևը պարզելու նպատակով, նախագծողների նախաձեռնությամբ կատարված պեղումները պարզեցին ուշադրավ կոնստրուկտիվ համակարգ։ Շենի կենտրոնական մասում տանիքի սալերը այնպես էին տեղադրված, որ համեմատաբար փոքր թեքության պայմաններում ապահովում էին լավ օդահեռացումը։ Այդ պայմանները խախտվեցին, երբ տանիքի կաթոցից խուսափելու համար վրան բարձրացել և փռել էին դդալի քանակությամբ հող։ Այդ ավելորդ բեռը ոչ թե նպաստել է հուշարձանի ամրությանը, այլ հանդիսանալով ջրակլանող հսկայական քաշ ունեցող դանդված, բացասական ազդեցություն էր թողել կառույցի տեխնիկական վիճակի վրա։ Դրա հետևանքով ավելի արագ են քայքայվել պատերը և ամբողջ կառույցը ընկել է վթարային վիճակի մեջ։ Շենքի այդպիսի խարխուլ վիճակից օգավելով առանձին շարամիտ անձնավորություններ կոտրել տարել են ոչ միայն պատերի շարվածքի քարերը, այլև քանդակազարդ ռելիեֆներից մեկը՝ դլխավոր խորանի հյուսիսային կողմում գտնվող Քրիստոսի հարության տեսարանի քանդակը։ Բացի այդ քանդակազարդ քարից, որը մեր արվեստի պատմության և հատկապես քանդակագործության տեսակետից բացառիկ նշանակություն ուներ, քանդել են նաև կից կառուցված շենքը և բոլոր քարերը տարել։

Հաշվի առնելով հուշարձանի այդպիսի ծանր դրությունը, Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման հայկական ընկերությունը դիմեց Ուկրաինայի համապատասխան ընկերությանը խնդրելով միջոցներ ձեռնարկել հուշարձանի վիճակը բարելավելու համար։ 1980 թ. կազմված է հուշարձանի վերանորոգման նախագիծը, որը դեռ չի սկսել իրականացվել։

Յու. Ա. ԹԱՄԱՆՅԱՆ